

СОЦИОЛОГИЯ

ՀՀ խոշորացված համայնքների բնակչության տեղի զգացման գործոնային կառուցվածքը

Ենգիդունյան Վահան Վ.

Սոցիոլոգիայի ֆակուլտետի Սոցիոլոգիայի տեսության և պատմության ամբիոնի ասպիրանտ,
Երևանի Պետական Համալսարան (Երևան, ՀՀ)

<https://orcid.org/0009-0008-9038-2642>,

vahan.engidunyan@ysu.am

ՀՏԳ՝ 308, 316.4; EDN: QXQBJM

DOI: 10.58587/18292437-2025.1-135

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ Տեղի զգացում, համայնքային խոշորացում, տեղի կապվածություն, համայնքի զգացում, տեղի ինքնություն, գործոնային վերլուծություն

Факторная структура чувства места населения расширенных сообществ РА

Енгидунян Ваган В.

Аспирант кафедры теории и истории социологии, Факультет социологии,
Ереванский Государственный Университет (Ереван, РА)

Аннотация. Пространственные смыслообразующие процессы, лежащие в основе логики взаимодействия пространство-сообщество, открывают для обоих возможности устойчивого развития и воспроизводства. Непрерывное взаимодействие с пространством на индивидуальном уровне формирует уникальную когнитивную систему - чувство места, позволяющее индивидам позиционировать себя в различных социально-пространственных процессах. Анализируя существующие подходы к чувству места, становится ясно, что чувство места не изолировано от других явлений, определяющих отношения пространство-индивидуум, а зачастую определяется вышеуказанными явлениями. Такими единицами являются, в частности, идентичность места, привязанность к месту и чувство общности. Хотя различные авторы обращались и даже эмпирически подтверждали взаимозависимость между чувством места и упомянутыми явлениями, но, учитывая вариативность концептуальных и операциональных систем внутри каждого исследовательского случая, возникает необходимость постоянной корректировки обсуждаемых связей путем совершенствования существующих моделей. Стоит также отметить, что хотя и существует ряд исследований, посвященных внутриобщинным и межобщинным социально-экономическим и политическим отношениям, вызванным новыми реалиями, сформировавшимися в результате расширения общин, последние лишь вскользь затрагивают существующие уточнение логики воспроизводства чувства места населения в расширенных сообществах. В этом контексте исследование, направленное на выявление социально-пространственных практик территориального управления в расширенных общинах РА, также обратилась к чувству места и его факторной структуре. В частности, путем адаптации к исследованию индикаторов, предложенных разными авторами, была предпринята попытка выяснить характеристики и факторную систему, определяющую чувство места населения расширенных общин РА. В частности выяснилось, что у подавляющего большинства населения расширенных сообществ наблюдается высокая степень чувства места, но она существенно различается в зависимости от пола жителей. Так, у женщин более низкое чувство места, чем у мужчин.

В контексте проведенного факторного анализа, качественные и количественные показатели внутрифакторного и межфакторного взаимодействия, сформированные путем группировки показателей, позволили выяснить, что местная идентичность, привязанность к месту, а также чувство общности являются факторами, определяющими чувство места населения расширенных общин РА. В то же время, привязанность к месту имеет наибольшее влияние в вышеупомянутом структуре.

Ключевые слова и словосочетания: Чувство места, расширение сообщества, привязанность к месту, чувство общности, идентичность места, факторный анализ

The Factor Structure of the Sense of Place of the Residents of Extended Communities of RA

Yengidunyan Vahan V.

Post-Graduate Student, Chair of Theory and History of Sociology, Faculty of Sociology
Yerevan State University (Yerevan, RA)

Abstract. Spatial sense-making processes, which underlie the logic of space-community interactions, provide opportunities for each of them for sustainable development and reproduction. Continuous interactions with space at the individual level form a unique cognitive system - a sense of place, which allows individuals to position themselves in

various socio-spatial processes. Analyzing the existing approaches to the sense of place, it becomes clear that the sense of place is not isolated from other phenomena determining space-individuum relationships and is often determined by the abovementioned phenomena. Such units are, in particular, place identity, place attachment and sense of community. Although various authors have addressed and even empirically confirmed the interdependence between the sense of place and the mentioned phenomena, but taking into account the variability of the conceptual and operational systems within each research case, there is a need to continuously adjust the relationships discussed by improving the existing models. It is also worth noting that although there are a number of studies devoted to intra-community and inter-community socio-economic and political relations caused by new realities formed as a result of the enlargement of communities, the latter only briefly touches on the existing refinement of the logic of reproducing the sense of place of the population in enlarged communities. In this context, the research aimed at revealing the socio-spatial practices of territorial management in the enlarged communities of RA also addressed the sense of place and its factor structure. In particular, by adapting the indicators proposed by different authors to the research case, an attempt was made to find out the characteristics and factor system determining the sense of place of the residents of the enlarged communities of RA. In particular, it was found that the vast majority of the population of enlarged communities has a high degree of sense of place, but this varies significantly depending on the gender of the residents. Thus, women have a lower sense of place than men.

In the context of the conducted factor analysis, qualitative and quantitative indicators of intrafactor and interfactor interaction, formed by grouping indicators, made it possible to find out that local identity, attachment to place, as well as a sense of community are factors that determine the sense of place of the population of enlarged communities of the Republic of Armenia. At the same time, place attachment has the greatest influence in the abovementioned framework.

Keywords and phrases: Sense of place, community enlargement, place attachment, sense of community, place identity, factor analysis

Ներածություն

Բնակավայրերի, որպես իմաստավորված տարածությունների, հետ շարունակական փոխազդեցությունների համատեքստում տեղի բնակչությունը օժտվում է յուրօրինակ կապվածությամբ, որը դրսևորվում է սոցիալական գործառնման ինչպես աֆեկտիվ, այնպես էլ կոգնիտիվ և կոնաստիվ մակարդակներում: Կապվածության վերոնշյալ դրսևորումները միավորվում են հասկացության մեկ միավորի՝ տեղի զգացման ներքո, որը կարելի է սահմանել, որպես «... *Ֆիզիկական տարածության վերաբերյալ մարդկանց սուբյեկտիվ ընկալումների և ... գիտակցված զգացմունքների ամբողջություն ... այն ներառում է մեկնաբանական հայացք և զգացմունքային ռեակցիա միջավայրի նկատմամբ*» [12, էջ 262]: Լոկալ բնակավայրերի բնակչության կայուն գործառնման և այդ բնակավայրերի զարգացման միջև օրինակափական կապերի բացահայտմանն ուղղված հետազոտությունները հաստատում են այն թեզը, ըստ որի, տեղի զգացումը ուղղակիորեն պայմանավորում է բնակիչ-բնակավայր փոխազդեցությունների գործող համակարգի վերարտադրությունն ու ամրապնդում բնակչության ներսում միջսուբյեկտային հարաբերությունները: Բնակչության տեղի զգացումը բավական զգայուն է բնակավայրերի վերաձևումների նկատմամբ և ցանկացած փոփոխություն կարող է էական ազդեցություն ունենալ վերոնշյալ ֆենոմենի հետագա վերարտադրության և, հետևապես, սոցիալական հարաբերությունների գործող տրամաբանության վրա: Հատկապես տարածական այն փոփոխությունները, որոնք չեն բխում տեղի բնակչության պահանջմունքներից, կարող են նվազեցնել բնակավայրերի նկատմամբ տեղի զգացումը՝ հանգեցնելով

բնակավայրերից բնակչության օտարման և սոցիալական հարաբերությունների առկա համակարգի խաթարման:

Սույն հիմնախնդիրը սուր է արտահայտված, հատկապես, Հայաստանի Հանրապետությունում, ուր ավարտվել է համայնքային խոշորացման գործընթացը: Համայնքային խոշորացման գործընթացը մի քանի անգամ շեղվել է իրականացման նախնական մեթոդաբանությունից՝ ենթարկվելով բազմաթիվ վերանայումների: Միաժամանակ 2020 թ.-ին ուժի մեջ մտած «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» որոշման [29] համաձայն՝ համայնքային միավորման կամ անջատման քվերակության արդյունքները այսուհետ կրելու էին խորհրդատվական բնույթ, ինչը ենթադրում էր տեղական ժողովրդավարության և որոշումների կայացման ոչ բավարար մակարդակի պահպանում: Թվարկված խնդիրները, որոնք ընկած են խոշորացված համայնքներում տարածական վերարտադրության գործող մեխանիզմի հիմքում, կարող են թուլացնել բնակչության տեղի զգացումը՝ խաթարելով սոցիալական հարաբերությունների գործող համակարգը: Սույն խնդրի կարևորությունը ընդգծվում է, հատկապես, քննարկվող խնդրո առարկայի շուրջ առկա գիտելիքի սղության համատեքստում: Մասնավորապես, չնայած առկա են մի շարք հետազոտություններ, որոնք անդրադառնում են համայնքային խոշորացման արդյունքում ձևավորված նոր իրողություններով պայմանավորված ներհամայնքային և միջհամայնքային սոցիալ-տնտեսական [11] և քաղաքական [30] հարաբերություններին, սակայն վերջիններս միայն հպանցիկ են անդրադառնում խոշորացված համայնքներում բնակ-

չույթյան տեղի զգացման վերարտադրման գործող տրամաբանության պարզաբանմանը:

Հաշվի առնելով առկա գիտելիքի բացը, ինչպես նաև վերոնշյալ հիմնախնդրի արդիականությունը՝ սույն հոդվածի շրջանակներում փորձ է արվում **պարզել** ՀՀ խոշորացված համայնքների բնակավայրերում բնակչության տեղի զգացման առանձնահատկությունները, ինչպես նաև բացահայտել այդ ֆենոմենը պայմանավորող հիմնարար գործոնները: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ բոլոր մարզերը ընդգրկող շուրջ 19 խոշորացված բնակավայրում՝ կիրառելով **քանակական հարցման մեթոդը**: Հարցման մասնակից հանդիսացող բնակիչների **ընտրանքը** կառուցվել է բազմաքայլ կլաստերային ընտրանքի տրամաբանությամբ, իսկ ընտրանքի ծավալը 600 է:

Տեղի զգացման հետազոտման տեսա-մեթոդաբանական կառուցվածքը

Տարածությունների հետ անհատների կամ սոցիալական խմբերի փոխազդեցությունները հիմնվում են լոկալ վայրերի մեկնաբանման և սահմանման երկու հիմնարար մոտեցումների՝ տարածության և տեղի հարաբերակցման վրա: Տարածությունները, իրենց նախնական դրսեորումներով ֆիզիկական-կառուցվածքային միավորներ են և վերածվում են տեղերի միայն այն ժամանակ, երբ, մուտք գործելով սուբյեկտների հետ մշտական փոխազդեցությունների դաշտ, վերջիններին կողմից օժտվում են իմաստով [21]: Ֆիզիկական տարածություններից՝ տեղերի վերանման գործընթացը թույլ է տալիս դրանք համարել «իմաստային կենտրոններ», որոնք կառուցված են ապրված փորձով և դրանից դուրս [26]: Տեղերի հետ անհատական փոխազդեցությունները ձևավորում են ճանաչողական յուրահատուկ համակարգ, որն այլ կերպ կոչվում է տեղի զգացում: Տեղի զգացման կոնցեպտուալ կառուցվածքը հասկանալու համար անդրադարձ է կատարվում դրա և տարածություն-անհատ հարաբերությունները բնութագրող այլ ֆենոմենների միջև փոխազդեցություններին: Իմաստավորված տարածություն-անհատ փոխազդեցություններով վերարտադրվող, բազմաբարդ ֆենոմեններից է տեղի ինքնությունը: Ըստ Բուրթինա-Ուոթսնի և Բենթլիի, տեղի ինքնությունը «... *իմաստների ամբողջություն է, որն ստացվում է մշակութային կոնկրետ լանդշաֆտի հետ և որոնցով յուրաքանչյուր անձ կամ խումբ ստեղծում է իր անձնական կամ սոցիալական ինքնությունը*» [4, էջ 6]: Տեղի ինքնության կոնցեպտուալացման համատեքստում ուշադրության են արժանի Թվիզեր-Ռոսսի և Ուզգելի [27] մոտեցումները, որոնք կառուցվում են ինքնության չորս բաղադրիչների՝ առանձնահատկության (Distinctive-

ness), շարունակականության (Continuity), ինքնագնահատականի (Self-esteem) և ինքնարդյունավետության (Self-efficacy), հետազոտության համատեքստում: Առանձնահատկությունը ինքնությունը պայմանավորող կարևորագույն գործոններից է, որը թույլ է տալիս ինչպես խմբային այնպես էլ անհատական մակարդակում ապահովել գիտակցված տարբերակում: Տարածական ընկալումների տեսանկյունից սա նշանակում է, որ իմաստավորված տարածություններում գործառող սուբյեկտները իրենց ինքնությունը սկսում են պայմանավորել, նաև այդ տարածությունը բնորոշող առանձնահատկություններով (օրինակ՝ քաղաքացի, գյուղացի): Ինքնության և տարածության միջև կապի համատեքստում իր յուրօրինակ դերն ունի շարունակականությունը, որը սահմանվում է իբրև «*շարունակականություն անցյալ և ներկա ինքնորոշման հայեցակարգերի (self-concepts) միջև ժամանակի և իրավիճակների շրջանակներում*» [27, էջ 207]: Այստեղ ինքնության և տարածության միջև փոխազդեցությունները մեկնաբանվում են տեղերի ռեֆերենտ և համատիպ շարունակականությունների շրջանակներում: Տեղերի, որպես ռեֆերենտ միավորների շարունակականությունը, պայմանավորված է դրանցում գործառող սուբյեկտների կողմից փորձի և հիշողության վերարտադրության անհրաժեշտությամբ: Համաձայն տեղի ռեֆերենտության մոտեցման, անհատական և խմբային փորձի ու հիշողության վերարտադրությունը սերտորեն փոխկապակցված է այն տարածության հետ, որում տեղի է ունենում այդ գործընթացը: Տարածությունը վերածվում է փորձի ու հիշողության ռեֆերենցիան ապահովող ֆենոմենի, որի փոփոխությունը կարող է արմատապես փոփոխել տեղի ինքնությունը անհատների շրջանում:

Ի տարբերություն տեղի ռեֆերենտ շարունակականության, համատիպ շարունակականությունը ենթադրում է շարունակականության ապահովում տեղը բնութագրող այնպիսի առանձնահատկություններով, որոնք ընդհանրական են և կարող են վերագրվել այլ տարածությունների: Այս պայմաններում հնարավոր է դառնում ինքնության պահպանումը տարածության փոփոխությունների համատեքստում: Վերջապես, եթե անդրադարձ կատարենք ինքնագնահատմանն ու ինքնարդյունավետությանը, ապա իմաստավորված տարածությունների հետ վերջիններիս փոխազդեցությունը առավելապես պայմանավորվում է անհատների, սեփական ինքնության վերաբերյալ դրական գնահատումների վերարտադրման և պահանջմունքների բավարարման հնարավորությունները: Տարածության կառավարելիությունը, արդյունքում, վերածվում է այն կենսական առանձնահատկության, որը թույլ է տալիս իրակա-

նացնել տարածության անհրաժեշտ վերափոխումներ, ըստ նպատակների:

Տեղի ինքնությունը, ինքնին, և առավել ևս դրա վերլուծական-կոնցեպտուալ առանձին միավորները, անհրաժեշտ, սակայն բավարարչեն տարածություն-սուբյեկտ փոխազդեցությունների ողջ սպեկտրը բացահայտելու համար: Տեղի ինքնության և տարածություն-անհատ/խումբ փոխազդեցությունները բնորոշելու համար արդի մոտեցումները ներմուծում են մի շարք հասկացություններ, ինչպիսին է տեղի կապվածությունը: Տեղի կապվածությունը «...աշխարհագրական վայրի նկատմամբ զգացմունքների ամբողջություն է, որը հուզականորեն մարդուն կապում է այդ վայրին...» [23, էջ 139]: Ինչպես տեսնում ենք նշյալ սահմանումից, տեղի կապվածությունը, ի տարբերություն տեղի ինքնության, ունի տարածություն-սուբյեկտ փոխազդեցությունների մեկնաբանողական առավել նեղ շրջանակ, միաժամանակ, սակայն, ստեղծում է առավել հստակ պատկերացում այդ փոխազդեցությունների կոգնիտիվ, աֆեկտիվ և կոնատիվ դրսևորումների տատանվող մակարդակների միջև, երբ աֆեկտիվ դրսևորումը ստանձնում է հարաբերականորեն գրիշխող դիրք: Տեղի կապվածության հետազոտության շրջանակներում ուշադրության է արժանի Սկանելի ու Գիֆորդի [24] մոտեցումները, ովքեր առաջարկում են տեղի կապվածության եռաբաղադրիչ մոդել: Համաձայն մոդելի, տեղի կապվածությունը պայմանավորվում է իմաստավորված տարածության՝ տեղի, դրանում տեղի ունեցող գործընթացների և այդ գործընթացները վերարտադրող անհատների կամ խմբերի փոխազդեցությունների միջոցով: Տեղանձ-գործընթաց հասկացություններով կառուցվող կոնցեպտուալ համակարգը թույլ է տալիս անցում կատարել տեղի կապվածության օպերացիոնալացման, և որտեղ հնարավոր կլինի ձևավորել տեղի կապվածությունը չափող ինդիկատորները: Տեղ-անձ-գործընթաց փոխազդեցությունների մեկնաբանման Սկանելի և Գիֆորդի մոտեցման կիրառականության ընդունման հետ մեկտեղ հարկ է նաև ընդունել այն փաստն, ըստ որի տեղի կապվածության առաջարկվող մոդելի և, մասնավորապես այն կազմող կոնցեպտուալ միավորների սոցիալ-հոգեբանական ուղղվածությունը սահմանափակող գործոն է տարածություն-սուբյեկտ փոխազդեցություններով պայմանավորվող տեղի կապվածության վերարտադրման սոցիոլոգիական տրամաբանությունը պարզաբանելու համար: Հաճախ տարածության հետ անհատի փոխազդեցությունները զուգորդվում են այլ անձանց հետ հարաբերություններով, ինչը ենթադրում է նվազագույնը տեղի կապվածության տարբեր դրսևորումների միջև փոխազդե-

ցությունների առկայություն: Այստեղ ուշադրության են արժանի, հատկապես տեղի կապվածության երկու դրսևորումները՝ տեղի կախվածությունը և արմատայնությունը (rootedness): Տեղի կախվածությունը առնչվում է «անձի և կոնկրետ վայրի որակով ասոցացվող տեղի և դրա ու այլ այլընտրանքային տեղերի որակների հետ համեմատությանը» [2, էջ 2], իսկ արմատայնությունը՝ «... անհատի անվտանգության և տեղանքին տիրապետելու բարձր զգացումը» [10, էջ 531]: Նշենք, որ ինչպես տեղի կախվածության [20] այնպես էլ արմատայնության [18] և բուն կապվածության [28] դեպքում կառուցվում են չափելի ինդիկատորներ:

Տարածություն-սուբյեկտ փոխազդեցությունների սոցիալական բնույթով պայմանավորված, այդ փոխազդեցությունները դուրս են գալիս զուտ տարածական փոխազդեցությունների սահմաններից և, համադրվելով միջանձնային հարաբերությունների հետ, ձևավորում են բազմաբարդ համակարգ: Հետևապես, միայն տեղի կապվածությամբ նշյալ հարաբերությունների մեկնաբանումը դառնում է անհնար: Այս համատեքստում առաջնային նշանակություն են սկսում ստանալ իմաստավորված տարածություններում միջանձնային կամ միջխմբային փոխազդեցությունները բնութագրող այնպիսի միավորների դուրսբերումը, որոնք կրացնեն տարածության ընկալման հասկացության համակարգը: Այդպիսի հասկացություն է համայնքի զգացումը, որն ըստ Մաք Միլանի և Չավիսի սահմանվում է, որպես «...զգացում, որ անդամներն ունեն պատկանելիություն, ... կարևոր են միմյանց և խմբի համար և ընդհանուր հավատք, որ անդամների պահանջմունքները կբավարարվեն միասին լինելու նրանց պարտավորության միջոցով» [19, էջ 9]: Համայնքի զգացումը, որպես ներխմբային հարաբերությունները բնութագրող ֆենոմեն, թույլ է տալիս միաժամանակ պարզել այդ հարաբերությունների տարածական պայմանավորվածությունը, քանզի համայնքը, իբրև յուրօրինակ սոցիալական խումբ սահմանվում է տարածքային և ռելյացիոն (ընդհանուր շահ, նպատակ հետապնդող) առանձնահատկություններով: Մաք Միլանի և Չավիսի [19] կողմից առաջարկվող մոդելում համայնքի զգացումը մեկնաբանվում է անդամակցության, ազդեցության, ինտեգրման և պահանջմունքների բավարարման ու կիսելի զգացմունքային կապերի միջև առկա փոխկապվածություններով: Չնայած տեղի կապվածության, ինքնության և համայնքի զգացման միջև առկա կոնցեպտուալ տարբերություններին, անհերքելի են վերոնշյալների միջև փոխազդեցությունները: Մասնավորապես, եթե վերլուծենք տարածության ընկալման և իմաստավորված տարածություններում սուբյեկտների միջև հա-

րաբերությունների կառուցվածքը, ապա պարզ կդառնա դրանք պայմանավորող ֆենոմենների միջև առկա կապերը: Այդ կապը դիտարկվում է, մասնավորապես, Յորգենսենի և Ստիդմանի [13] կողմից առաջարկվող կոնցեպտուալ սխեմայում, որում տեղի կապվածությունը և ինքնությունը դիտվում են, որպես տեղի զգացման բաղադրիչներ: Եթե ընդունենք ֆենոմենների միջև վերոնշյալ առնչությունը, ապա տեղի զգացումը կարելի է սահմանել, որպես «... ֆիզիկական տարածության վերաբերյալ մարդկանց սուբյեկտիվ ընկալումների և ... գիտակցված զգացումների ամբողջություն ... այն ներառում է մեկնաբանական հայացք և զգացումնալիս ռեակցիա միջավայրի նկատմամբ» [12, էջ 262]: Տեղի զգացման Յորգենսենի և Ստիդմանի մոտեցումը զարգացվում է Դոմինգեսի, Գոնսալվեսի և Ժեզուսի [6] կողմից, ովքեր առաջարկում են տեղի զգացման առավել մշակված և բազմաբաղադրիչ մոդել: Ի տարբերություն տեղի զգացման արդեն իսկ քննարկված երկչափ մոդելի, վերոնշյալ հեղինակների կարծիքով տեղի զգացումը, ոչ միայն տեղի կապվածության և ինքնության, այլև համայնքի զգացմամբ պայմանավորվող ֆենոմեն է: Ավելին, տեղի ընկալման այս ֆենոմենների միջև առկա նշանակալի կապերը, թույլ են տալիս ինդիկատորների համադրմամբ կառուցել տեղի զգացումը չափող սանդղակներ: Դոմինգեսի, Գոնսալվեսի և Ժեզուսի մոտեցումները թույլ են տալիս պնդել, որ անգամ այն փաստը, ըստ որի, համայնքի զգացման ձևավորումը տարածականորեն պայմանավորված չէ, չի սահմանափակում դրա՝ այլ միավորների հետ փոխազդեցությունները, քանզի առավել բարձր մակարդակի հասկացության՝ տեղի զգացման հետ փոխհարաբերման համատեքստում, պարզ է դառնում համայնքի զգացման նշանակությունը, ոչ միայն անհատական սոցիալական կապիտալի վերարտադրության [1], այլև տարածության իմաստավորման համար [22]: Այսպիսով կառուցվում է տեղի զգացման քառաչափ մոդել հիմնված տեղի, մարդկանց, ժամանակի և անձի (self) կոնցեպտների վրա, որոնք իրենց հերթին ներառում են տեղի կապվածության, ինքնության, համայնքի զգացման չափելի բաղադրիչները: Չնայած, տեղի զգացման նման մոտեցումը, առավել կիրառելի է սույն հետազոտական աշխատանքի համար, քանզի առաջարկում է տարաբնույթ ֆենոմենների մեկ կոնցեպտուալ շրջանակում դիտարկելու էմպիրիկ հնարավորություններ, սակայն հեղինակների կողմից մատնանշվող մտավախությունները ստիպում են վերանայել դրա ուղղակի կիրառումը: Իսոպքը, հատկապես, կառուցված մոդելի միայն հետթեստային (posthoc) մոդիֆիկացիայի միջոցով ցանկալի արդյունքների արձանագրման և նույնատիպ ինդիկատորների կոնցեպտուալ

տարբեր միավորներում առկայության մասին է: Հաշվի առնելով տեղի զգացման առնչվող վերոնշյալ դիտարկումներն ու սահմանափակումները՝ առաջարկվում է տարանջատել տեղի ինքնության, կապվածության և համայնքի զգացման բաղադրիչները խուսափելու համար նշյալ ռիսկերից՝ ձևավորելով տեղի զգացման եռաչափ մոդել: Այսպիսով առաջարկվում է տեղի զգացման հետևյալ սահմանումը, այն է. *տեղի զգացումը իմաստավորված տարածությունների նկատմամբ սեփական ինքնության սահմանման, կապվածության և միևնույն տարածությունը կիսող համայնքին պատկանելիության զգացման անհատական կոգնիտիվ, աֆեկտիվ և կոնստիվ գործընթացների ամբողջություն է:*

Տեղի զգացման նկարագրական վերլուծություն

ՀՀ խոշորացված համայնքներում սոցիալ-տարածական պլանավորման բաղադրիչներից առաջինը տեղի զգացումն է վերլուծության ենթարկվել: Այն հետազոտվել է 16 կարգային փոփոխականների միջոցով, որոնք չափում են տեղի զգացման առանձին բաղադրիչներ համարվող տեղի կապվածությունը, ինքնությունը և համայնքի զգացումը: Տեղի կապվածությունը հետազոտվել է հարցման մասնակիցների կողմից հետևյալ դատողություններին տրված համաձայնությամբ կամ անհամաձայնությամբ. «Ես շատ եմ կապված այս բնակավայրի հետ», «Ես իմ բնակավայրում ինձ ավելի հարմարավետ եմ զգում, քան ցանկացած այլ բնակավայրում», «Ես երջանիկ եմ, որ սպրում/աշխատում/բիզնես եմ վարում իմ բնակավայրում», «Այս վայրը լավագույն վայրն է այն ամենի համար, ինչ ես սիրում եմ անել», «Ոչ մի այլ վայր չի կարող համեմատվել իմ բնակավայրի հետ», «Այրել և աշխատել իմ բնակավայրում ավելի կարևոր է ինձ համար քան անել դրանք այլ վայրերում», «Ես լավ հիշողություններ ունեմ իմ բնակավայրում», «Ես սպրում եմ այստեղ, քանի որ այստեղ է սպրում նաև իմ ընտանիքը (ծնողներ, տատիկներ և պապիկներ)», «Ես սպրում եմ այստեղ, քանի որ այստեղ եմ սպրում նաև ընկերներս»: Փոփոխականները չափվել են Լայկերտի 5 բալային սանդղակով, որտեղ 1-Ընդհանրապես համաձայն չեմ, 2-Ավելի շուտ համաձայն չեմ, 3-Ոչ համաձայն եմ, ոչ էլ համաձայն չեմ, 4-Ավելի շուտ համաձայն եմ, 5-Լիովին համաձայն եմ: Իրականացված նկարագրական վերլուծության միջոցով ըստ դատողությունների դուրս են բերվել համաձայնության մակարդակները: Նշյալ դատողություններից համաձայնության («Ավելի շուտ համաձայն եմ» և «Լիովին համաձայն եմ տարբերակները» միասին) ամենաբարձր մակարդակը գրանցվել է «Ես սպրում եմ այստեղ, քանի որ այստեղ է սպրում նաև իմ ընտանիքը (ծնողներ, տատիկներ և

պատկերներ)» դատողության դեպքում՝ կազմելով 93.4%: Դրան հաջորդում են «Ես իմ բնակավայրում ինձ ավելի հարմարավետ եմ գտնւմ, քան ցանկացած այլ բնակավայրում»՝ 93.1%, «Ես լավ հիշողություններ ունեմ իմ բնակավայրում»՝ 93.0%, «Ես շատ եմ կապիւած այս բնակավայրի հետ» դատողությունը՝ 92.3%, «Ես երջանիկ եմ, որ սպրում/աշխատում/բիզնես եմ փարում իմ բնակավայրում»՝ 90.4%, «Այրել և աշխատել իմ բնակավայրում ավելի կարևոր է ինձ համար քան անել դրանք այլ վայրերում»՝ 82.8%, «Այս վայրը լավագոյն վայրն է այն ամենի համար, ինչ ես սիրում եմ անել»՝ 80.5%, «Ոչ մի այլ վայր չի կարող համեմատուկ իմ բնակավայրի հետ»՝ 78.7% և «Ես սպրում եմ այստեղ, քանի որ այստեղ եմ սպրում նաև ընկերներս»՝ 79.8%: Հետաքրքրական է, որ ըստ սեռի իրականացված միջխմբային տարբերությունների Խի քառակուսի թեստի արդյունքները, որոշ փոփոխականների դեպքում գրանցել են նշանակալի արժեքներ: Մասնավորապես, «Ոչ մի այլ վայր չի կարող համեմատուկ իմ բնակավայրի հետ» դատողության համատեքստում արական սեռի ներկայացուցիչների 83.2%-ն է համաձայնվել սույն դատողության հետ, մինչդեռ իգական սեռի ներկայացուցիչների շրջանում այդ ցուցանիշը՝ 75.6% է (Chi-square=13.3, df=4, p=0.01): Ուշադրության է արժանի նաև, այն, որ կորեյացիայի Կրամերի գործակցի գրանցած արժեքը ևս նշանակալի է (Cramer's V=0.15, p=0.01): Մյուս նշանակալի տարբերությունը գրացվել է «Ես սպրում եմ այստեղ, քանի որ այստեղ եմ սպրում նաև ընկերներս» դատողության դեպքում, ուր արական սեռի ներկայացուցիչների 87.3%-ն է համաձայնվել դատողության հետ, ինչը 12.7%-ով ավելի է իգական սեռի ներկայացուցիչների գրանցած արդյունքից (74.6%) (Chi-square=19.2, df=4, p<0.001): Ինչպես նախկին օրինակում, այս դեպքում ևս կորեյացիայի գործակիցը նշանակալի է (Cramer's V=0.18, p<0.001):

Համայնքի զգացման չափումն իրականացվել է հետևյալ դատողությունների միջոցով. «Ես գիտեմ իմ բնակավայրում ապրող մարդկանց մեծ մասի անունը» «Ես կարևորում եմ իմ հարևանների և համայնքի կարծիքը», «Երբ իմ բնակավայրում խնդիրներ են լինում, հարևանները/համայնքը միանում են խնդիրները լուծելու համար», «Ես կարող եմ վստահել այս համայնքի անդամներին»: Դատողությունները, ըստ նրանց նկատմամբ համաձայնության մակարդակի բաշխվում են հետևյալ կերպ. «Ես գիտեմ իմ բնակավայրում ապրող մարդկանց մեծ մասի անունը» 73.4%, «Ես կարևորում եմ իմ հարևանների և համայնքի կարծիքը» 63.7%, «Երբ իմ բնակավայրում խնդիրներ են լինում, հարևանները/համայնքը միանում են խնդիրները լուծելու համար» 62%, «Ես կարող եմ վստահել

այս համայնքի անդամներին» 60.1%: Ըստ սեռի իրականացված Խի-քառակուսի թեստի արդյունքները փաստում են, որ «Ես գիտեմ իմ բնակավայրում ապրող մարդկանց մեծ մասի անունը» դատողության դեպքում արական սեռի ներկայացուցիչների շրջանում 18.8%-ով ավելի շատ հարցվածներ են համաձայնվել սույն դատողության հետ (84.5%), քան իգական սեռի ներկայացուցիչների շրջանում (65.7%) (Chi-square=37.0, df=4, p<0.001): Խմբավորող և ստուգվող փոփոխականների միջև կորեյացիան 0.25 է: Նշանակալի տարբերություն է գրանցվել, նաև «Երբ իմ բնակավայրում խնդիրներ են լինում, հարևանները/համայնքը միանում են խնդիրները լուծելու համար» դատողության դեպքում: Մասնավորապես, արական սեռի ներկայացուցիչների 65.7%-ն է համաձայնվել սույն դատողությանը, մինչդեռ իգական սեռի ներկայացուցիչների դեպքում այն 59.4% է (Chi-square=16.7, df=4, p=0.002): Այս դեպքում Կրամերի գործակիցը 0.17 է: Համայնքի զգացումը չափող ինդիկատորներից վերջինը, որն ըստ սեռի գրանցել է նշանակալի տարբերություններ «Ես կարող եմ վստահել այս համայնքի անդամներին» դատողություն է: Արդյունքները փաստում են, որ տեղամարդկանց շրջանում վերոնշյալ դատողությանը համաձայնություն տվողների տեսակարար կշիռը (62.8%) 4.7%-ով բարձր է կանանց շրջանում գրանցված ցուցանիշից (58.1%) (Chi-square=11.5, df=4, Cramer's V=0.14, p=0.02):

Վերջապես, տեղի ինքնության համատեքստում չափվել են երկու փոփոխականներ՝ «Ես ինձ գտնւմ եմ այս բնակավայրի մի մաս» և «Ես ավելի շատ նման եմ այստեղ ապրող մարդկանց, քան այլ վայրերից եկածներին»: Այս դեպքում համաձայնությունների ամենամեծ տոկոսը բաժին է ընկնում «Ես ինձ գտնւմ եմ այս բնակավայրի մի մաս» դատողությանը (92.5%), մինչդեռ «Ես ավելի շատ նման եմ այստեղ ապրող մարդկանց, քան այլ վայրերից եկածներին» դատողության դեպքում այն կազմում է 80.9%: Ինչպես տեղի կապվածության և համայնքային զգացման, այնպես էլ տեղի ինքնության դեպքում արական սեռի ներկայացուցիչների շրջանում նշյալ դատողություններին համաձայնության տեսակարար կշիռը («Ես ինձ գտնւմ եմ այս բնակավայրի մի մաս»՝ 95.1%, «Ես ավելի շատ նման եմ այստեղ ապրող մարդկանց, քան այլ վայրերից եկածներին»՝ 85.7%) գերազանցում է իգական սեռի ներկայացուցիչների շրջանում գրանցված արդյունքներին («Ես ինձ գտնւմ եմ այս բնակավայրի մի մաս»՝ 90.6% և «Ես ավելի շատ նման եմ այստեղ ապրող մարդկանց, քան այլ վայրերից եկածներին»՝ 77.7%): Այս դեպքում, ևս թե՛ առաջին (Chi-square=17.1, df=4, Cramer's V=0.17, p=0.002) և թե՛ երկրորդ (Chi-

square=13.3, df=4, Cramer's V=0.15, p=0.01) դատողությունների դեպքում ըստ սեռի տարբերությունները նշանակալի են:

Դիտարկելով վերոնշյալ արդյունքները կարող ենք փաստել, որ հարցման մասնակիցների գերակշիռ մեծամասնությունը օժտված է տեղի ներգրավվածության բարձր մակարդակով: Մասնավորապես տեղի զգացման փոփոխականներով հաշվարկվող գումարային գնահատականի միջին թվաբանական արժեքը ցույց է տալիս, որ հարցման մասնակիցների 89.4%-ը գրանցել է միջինից բարձր (4 կամ 5) ցուցանիշներ: Մասնաթղթում է, որ առանձին բնակավայրերի բնակիչները ոչ միայն կապված են սեփական բնակավայրերին, իբրև ֆիզիկական տարածություններին, այլև ունեն տեղի համայնքի հետ դրական փորձով վերարտադրվող վստահելի փոխհարաբերություններ, որոնք արդյունքում պայմանավորում են բնակավայրի, որպես ֆիզիկա-սոցիալական միջավայրի, հետ նույնականացումը:

Տեղի զգացման գործոնային կառուցվածքը

Հիմնվելով տեղի զգացման առկա տեսամեթոդաբանական մոտեցումների, տեղի զգացման արդեն իսկ մշակված գործոնային մոդելների արդյունքների, ինչպես նաև հաշվի առնելով հետազոտական սույն քեյսի շրջանակներում առկա ինդիկատորների վերանայումները ու մշակումները առաջադրվում է տեղի զգացման գործոնային կառուցվածքի վերստուգման վարկած: Այն է. << *Խոշորացված համայնքների բնակավայրերում բնակիչների տեղի զգացման գործոնային մոդելը պայմանավորված է տեղի կապվածությամբ, համայնքի զգացմամբ և տեղի ինքնությանը, որտեղ առավել մեծ ազդեցություն ունի տեղի կապվածությունը:*

Առաջադրված վարկածի ստուգման համար իրականացվել է բացահայտող գործոնային վերլուծություն (exploratory factor analysis) FACTOR վերլուծական ծրագրի միջոցով [7]: Մինչ գործոնային վերլուծության իրականացումը տվյալների առկա բազայի երկու հավասարամեծ մասերի համեմատությամբ ստուգվել է բացահայտող գործոնային վերլուծության իրականացման հնարավորությունը [17]: Հաշվարկված ինդեքսի արժեքը (0.98) է, ինչը բավական բարձր արդյունք է հավաքագրված տվյալներով բացահայտող գործոնային վերլուծություն իրականացնելու համար: Գործոնային վերլուծությունում ներառվող ինդիկատորների կարգային սանդղակավորմամբ և ոչ նորմալ բաշխվածությամբ պայմանավորված՝ դիսպերսիոն մատրիցան կառուցվել է պոլիխորն կորելյացիայի միջոցով, իսկ գործոնների դուրսբերման և դրանց պարզունակության

ապահովման համար կիրառվել է անկուն-նագծային կշռված փոքրագույն քառակուսիների (RDWLS) մեթոդը և տվյալների պրոմաքս (Promax) շրջումը, ինչը թույլ է տալիս հաշվի առնել, նաև գործոնների միջև հնարավոր կորելյացիաները [25]:

Ստացված տվյալների համաձայն, Կայգեր-Մայեր-Օլիկինի թեստի [14] գրանցած ցուցանիշը 0.91 է, իսկ ստվյալների սֆերիկ բաշխվածության Բարթլեթի գործակիցը վիճակագրորեն նշանակալի է (Bartlett's statistic=5112.3, df=91, p<0.001), ինչը փաստում է, որ ձևավորված կորելյացիոն մատրիցայի միջոցով դուրս բերված փոխկապվածությունները ճշգրիտ են: Ստուգվել է, նաև փոփոխականների միջև հնարավոր բարձր կորելյացիաների առկայությունը: Մատրիցայի դետերմինանտի գրանցված ցուցանիշը, որն այս դեպքում 0.0001 է գերազանցում է նվազագույն ընդունելի սահմանը՝ 0.00001, ինչը թույլ է տալիս հերքել այնդեղ, որ փոփոխականների միջև չկան ուժեղ փոխկապվածություններ [8]: Բացի վերոնշյալ թեստերից, ստուգվել է գործոնային վերլուծությունում փոփոխականների ներառման ճշգրտությունը [15]: Իրականացված ստուգման արդյունքում հեռացվել է միայն «*Ես ապրում եմ այստեղ, քանի որ այստեղ է ապրում նաև իմ ընտանիքը (ծնողներ, տատիկներ և պապիկներ)*» փոփոխականը, քանի որ այն չի բավարարել ընտրանքի ճշգրտության այն պայմանին, համաձայն որի, 0.5-ից ցածր ցուցանիշներ գրանցած փոփոխականները հեռացվում են փոփոխականների ընդհանուր խմբից, քանզի չեն չափում այն նույն երևույթը, ինչ մնացած փոփոխականները:

Հեռացված փոփոխականով գործոնային վերլուծության վերագործարկումից հետո փոփոխականների վարիացիաների բացատրության իրականացված հաշվարկների համաձայն պարզ է դառնում, որ գործոնների միջոցով բացատրման նվազագույն ցուցանիշը գրանցվել է «*Ես ինձ զգում եմ այս բնակավայրի մի մաս*» փոփոխականի դեպքում՝ կազմելով 0.36, ինչը բավական մեծ ցուցանիշ է եզրակացնելու, որ գործոնային վերլուծությունում ներառված յուրաքանչյուր փոփոխականի առնվազն 51%-ը բացատրվում է այդ գործոնների միջոցով: Բացահայտող գործոնային վերլուծության արդյունքները ստուգվում են վիճակագրական ցուցանիշներով, որոնք պարզաբանում են գործոնային մոդելով իրականացվող եզրահանգումների համապատասխանությունը իրականությանը: Մասնավորապես հաշվարկվել են մոտարկման միջին քառակուսային սխալի արմատը (RMSEA=0.037), չնորմավորված համապատասխանության ինդեքսը (NNFI=0.993), ինչպես նաև համեմատական համապատասխանության ինդեքսը (CFI=0.996)

և մնացորդների միջին քառակուսային արմատը (RMSR=0.0356): Ստացված տվյալները ցույց են տալիս, որ կառուցված մոդելը համապատասխանում է օգտագործվող տվյալների առանձնահատկություններին [9]:

Ինչպես պարզ դարձավ գործոնային վերլուծության նկարագրման նախորդ փուլերում՝ բացահայտող գործոնային մոդելի ճշգրտության և համապատասխանության ստուգման արդյունքում նախնական 15 փոփոխականների թիվը կրճատվեց 1-ով: Առկա 14 փոփոխականով իրականացված վերլուծության արդյունքում տեղի զգացումը չափող ինդիկատորները խմբավորվել են երեք հիմնական գործոններում: Կառուցված մոդելը բացատրում է ընդհանուր վարիացիայի 70.5%-ը, որտեղ առաջին գործոնին բաժին է ընկնում 51.1%, երկրորդին՝ 11.8%, իսկ երրորդին՝ 7.5%: Սա նշանակում է, որ տեղի զգացման գրանցված ցուցանիշները մեծապես պայմանավորվում են առաջին գործոնով: Առաջին գործոնում խմբավորվել են հետևյալ փոփոխականները իրենց համապատասխան ծանրաբեռնվածությամբ. «*Ես շատ եմ կապված այս բնակավայրի հետ*» (0.837), «*Ես իմ բնակավայրում ինձ ավելի հարմարավետ եմ զգում, քան ցանկացած այլ բնակավայրում*» (0.886), «*Ես երջանիկ եմ, որ սպրում/աշխատում/բիզնես եմ վարում իմ բնակավայրում*» (0.873), «*Այս վայրը լավագույն վայրն է այն ամենի համար, ինչ ես սիրում եմ անել*» (0.770), «*Ոչ մի այլ վայր չի կարող համեմատվել իմ բնակավայրի հետ*» (0.829) և «*Այրեղ և աշխատել իմ բնակավայրում ավելի կարևոր է ինձ համար քան անել դրանք այլ վայրերում*» (0.811): Նշյալ գործոնով խմբավորված փոփոխականները ցուցաբերում են ներգործոնային բարձր կայունություն, քանզի օմեգա ցուցանիշը 0.865 է: Վերոնշյալ փոփոխականների բովանդակային վերլուծությամբ պարզ է դառնում, որ նրանք բնութագրում են տեղի կապվածության միանգամից երկու բաղադրիչ, այն է՝ տեղի կապվածությունը և կախվածությունը: Երկրորդ գործոնը ներառում է հետևյալ փոփոխականները. «*Ես լավ հիշողություններ ունեմ իմ բնակավայրում*» (0.632), «*Ես սպրում եմ այստեղ, քանի որ այստեղ եմ սպրում նաև ընկերներս*» (0.666), «*Ես գիտեմ իմ բնակավայրում սպրող մարդկանց մեծ մասի անունը*» (0.698), «*Ես ինձ զգում եմ այս բնակավայրի մի մաս*» (0.554) և «*Ես ավելի շատ նման եմ այստեղ սպրող մարդկանց, քան այլ վայրերից եկածներին*» (0.573): Այս դեպքում ևս ներգործոնային կայունության օմեգա ցուցանիշը բարձր է և կազում է 0.719: Ստացված արդյունքները փաստում են, որ նշյալ փոփոխականներով ձևավորվող տեղի զգացման բաղադրիչը տեղի ինքնության յուրահատուկ դրսևորում է, որը սահմանվում է ոչ միայն

բնակավայրի և այնտեղ գործառող անձնաց հետ նույնականացմամբ, այլև այդ բնակավայրի հետ զգացմունքային ասոցացմամբ (հարկ է նշել, որ տեղի զգացման օպերացիոնալ սխեմայի նախնական տարբերակում, տեղի արմատայնությունը, որպես բնակավայրի հետ ասոցացման չափողականություն ներառված է եղել տեղի կապվածության բաղադրիչում): Վերջապես, երրորդ գործոնը, որն առավելապես բնութագրում է բնակիչների համայնքային զգացումը ներառում է «*Ես կարևորում եմ իմ հարևանների և համայնքի կարծիքը*» (0.601), «*Երբ իմ բնակավայրում խնդիրներ են լինում, հարևանները/համայնքը միանում են խնդիրները լուծելու համար*» (0.873) և «*Ես կարող եմ վստահել այս համայնքի անդամներին*» (0.835), փոփոխականները: Ինչպես առաջին և երկրորդ գործոնների դեպքում այս դեպքում, ևս փոփոխականներով պայմանավորված ներգործոնային կայունության օմեգա ցուցանիշը (0.768) գերազանցում է 0.7 ցուցանիշը և, հետևապես, մատնանշում է փոփոխականների միջև ներքին բարձր կայունությունը: Առանձին գործոններում փոփոխականների բարձր ծանրաբեռնվածությունը անհրաժեշտ է դարձնում պարզել կոնկրետ փոփոխականների մեկից ավելի գործոնային խմբում նշանակալի ծանրաբեռնվածությունը և գործոնների միջև հնարավոր բարձր կորելյացիան: Սույն խնդրի լուծման համար հաշվարկվել են Բենթլերի ինդեքսը [3] (0.99) և ծանրաբեռնվածության պարզունակության ինդեքսը [16] (0.62): Գրանցված արդյունքները փաստում են, որ յուրաքանչյուր փոփոխական առավելապես բացատրվում է մեկ գործոնով: Վերջապես, գործոնների միջև իրականացված կորելյացիոն վերլուծությունը պարզաբանում է, որ, չնայած առկա են նշանակալի կապվածություններ առաջին և երկրորդ (0.491), առաջին և երրորդ (0.699) և երկրորդ ու երրորդ (0.581) գործոնների միջև, սակայն այդ փոխազդեցությունները բավական ուժգին չեն, որպեսզի հաստատվի գործոնների միջև խիստ կապվածության և, հետևապես, անկախության բացառման հիպոթեզը:

Ամփոփելով իրականացված գործոնային վերլուծության արդյունքները կարող ենք հաստատել նախապես առաջադրված այն վարկածն, ըստ որի՝ «*խոշորացված համայնքների բնակավայրերում բնակիչների տեղի զգացման գործոնային մոդելը պայմանավորված է տեղի կապվածությամբ, համայնքի զգացմամբ և տեղի ինքնությանը, որտեղ առավել մեծ ազդեցություն ունի տեղի կապվածությունը*»:

Եզրակացություն

Տարածություն-անհատ փոխազդեցություններով վերարտադրվող տեղի զգացման վերա-

բերյալ առկա տեսական մոտեցումների վերլուծությանը պարզ դարձավ, որ տեղի զգացումը պայմանավորվում է մի շարք այնպիսի ֆենոմեններով ինչպիսիք են՝ տեղի ինքնությունը, տեղի կապվածությունը և համայնքի զգացումը: Մրանք այն հիմնական գործոններն են, որոնք ապահովում են լոկալ բնակավայրերի բնակիչների կողմից իրենց բնակավայրերի իմաստավորումը և դրանով պայմանավորված ճանաչողական համակարգի վերարտադրությունը: Այսպիսով հնարավոր եղավ առաջադրել տեղի զգացման նոր սահմանում, այն է. Իմաստավորված տարածությունների նկատմամբ սեփական ինքնության սահմանման, կապվածության և միևնույն տարածությունը կիսող համայնքին պատկանելիության զգացման անհատական կոգնիտիվ, աֆեկտիվ և կոնատիվ գործընթացների ամբողջություն: Տեղի զգացման ինդիկատորների նկարագրական վերլուծության համաձայն, չնայած խոշորացված համայնքների բնակչության գերակշիռ մեծամասնության շրջանում դիտվում է սեփական բնակավայրերի նկատմամբ տեղի զգացման բարձր աստիճան, սակայն այն նշանակալիորեն տարբերվում է ըստ բնակիչների սեռի: Մասնավորապես, իգական սեռի ներկայացուցիչների մոտ տեղի զգացումը ավելի ցածր է, քան արական սեռի ներկայացուցիչների շրջանում:

Տեղի զգացումը պայմանավորող ֆենոմենների միջև փոխապայմանավորվածությունները, հետազայում, ստուգվեցին բացահայտող գործոնային վերլուծության միջոցով: Արդյունքում, ինդիկատորների խմբավորմամբ ձևավորված գործոնների ներգործոնային և միջգործոնային փոխազդեցությունների որակական և քանակական ցուցանիշները թույլ տվեցին հաստատել նախապես առաջադրված այն վարկածն, ըստ որի, «Վ խոշորացված համայնքների բնակավայրերում բնակիչների տեղի զգացման գործոնային մոդելը պայմանավորված է տեղի կապվածությամբ, համայնքի զգացմամբ և տեղի ինքնությամբ, որտեղ առավել մեծ ազդեցություն ունի տեղի կապվածությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Acedo A., Painho M., and Casteleyn S.**, “Place and City: Operationalizing Sense of Place and Social Capital in the Urban Context,” // *Transactions in GIS* 21, no. 3 (June 2017): pp. 503–520, <https://doi.org/10.1111/tgis.12282>
2. **Alrobaee T. R. and Al-Kinani A. S.**, “Place Dependence as the Physical Environment Role Function in the Place Attachment,” // *IOP Conference Series: Materials Science and Engineering* 698, no. 3 (December 1, 2019): 7 p., <https://doi.org/10.1088/1757-899X/698/3/033014>

3. **Bentler P. M.**, “Factor Simplicity Index and Transformations,” *Psychometrika* 42, no. 2 (June 1977): pp. 277–295, <https://doi.org/10.1007/BF02294054>
4. **Butina Watson G. and Bentley I.**, *Identity by Design* (Amsterdam: Elsevier, Butterworth-Heinemann, 2007). – 289 p.
5. **Chavis D., Hogge J., and McMillan D.**, “Sense of Community Through Brunswik’s Lens: A First Look,” // *Journal of Community Psychology* 14 (1986): pp. 24–40.
6. **Domingues R., Gonçalves G., and Neves de Jesus S.**, “Measuring Sense of Place: A New Place-People-Time-Self Model,” // *Journal of Spatial and Organizational Dynamics* IX, no. 3 (2021): pp. 238–257.
7. **Ferrando P. J. and Lorenzo-Seva U.**, “Program FACTOR at 10: Origins, Development and Future Directions,” *Psicothema*, no. 29.2 (May 2017): pp. 236–240, <https://doi.org/10.7334/psicothema2016.304>
8. **Field A. P.**, *Discovering Statistics Using IBM SPSS Statistics, Fourth edition* (New Delhi, India: SAGE Publications, 2013). – 2617 p.
9. **Finch W. H.**, “Using Fit Statistic Differences to Determine the Optimal Number of Factors to Retain in an Exploratory Factor Analysis,” *Educational and Psychological Measurement* 80, no. 2 (April 2020): pp.217–241, <https://doi.org/10.1177/0013164419865769>
10. **Harun N. Z., Mansor M., and Said I.**, “Place Rootedness Suggesting the Loss and Survival of Historical Public Spaces,” *Procedia Environmental Sciences* 28 (2015): pp. 528–537, <https://doi.org/10.1016/j.proenv.2015.07.063>
11. **Harutyunyan S. and Mkrtchyan A.**, “The Formation of Communities as a Social-Spatial Practice: Peculiarities of the Community Enlargement Reform in the Republic of Armenia,” *Democracy and Human Rights* (Yerevan: Friedrich-Ebert-Stiftung, 2021). – 13 p.
12. **Hummon D.**, “Community Attachment: Local Sentiment and Sense of Place,” in *Place Attachment*, ed. Irwin Altman and Setha Low, Reprint of the original 1 st ed. (S.l.: Springer US, 2012), pp. 253–278.
13. **Jorgensen B. S. and Stedman R. C.**, “Sense of Place as An Attitude: Lakeshore Owners Attitudes Toward Their Properties,” // *Journal of Environmental Psychology* 21, no. 3 (September 2001): pp. 233–248, <https://doi.org/10.1006/jevp.2001.0226>
14. **Kaiser H. F.**, “An Index of Factorial Simplicity,” // *Psychometrika* 39, no. 1 (1974): pp. 31–36.
15. **Lorenzo-Seva U. and Ferrando P. J.**, “MSA: The Forgotten Index for Identifying Inappropriate Items before Computing Exploratory Item Factor Analysis,” // *Methodology* 17, no. 4 (December 17, 2021): pp. 296–306, <https://doi.org/10.5964/meth.7185>
16. **Lorenzo-Seva U.**, “A Factor Simplicity Index,” // *Psychometrika* 68, no. 1 (March 2003): pp. 49–60, <https://doi.org/10.1007/BF02296652>
17. **Lorenzo-Seva U.**, “SOLOMON: A Method for Splitting a Sample into Equivalent Subsamples in Factor Analysis,” // *Behavior Research Methods* 54,

- no. 6 (December 16, 2021): pp.2665–2677, <https://doi.org/10.3758/s13428-021-01750-y>
18. **McAndrew F. T.**, “The Measurement of ‘Rootedness’ and The Prediction of Attachment to Home-Towns in College Students,” // Journal of Environmental Psychology 18, no. 4 (December 1998): 409–417, <https://doi.org/10.1006/jevvp.1998.0078>
 19. **McMillan D., and Chavis D.** “Sense of Community: A Definition and Theory.” // Journal of Community Psychology 14 (1986): pp.6–23.
 20. **Raymond C. M., Brown G., and Weber D.**, “The Measurement of Place Attachment: Personal, Community, and Environmental Connections,” // Journal of Environmental Psychology 30, no. 4 (December 2010): pp.422–434, <https://doi.org/10.1016/j.jenvp.2010.08.002>
 21. **Relf E. C.**, Place and Placelessness, Research in Planning and Design (London: Pion, 1976). – 156 p.
 22. **Rita D., Gonçalves G., and Neves de Jesus S.** “Measuring Sense of Place: A New Place-People-Time-Self Model.” // Journal of Spatial and Organizational Dynamics IX, no. 3 (2021): pp.238–257.
 23. **Rubinstein R. and Parmelee P.**, “Attachment to Place and the Representation of the Life Course by the Elderly,” in Place Attachment, ed. Irwin Altman and Setha Low, Reprint of the original 1 st ed. (S.I.: Springer US, 2012), pp.139-164.
 24. **Scannell L. and Gifford R.**, “Defining Place Attachment: A Tripartite Organizing Framework,” // Journal of Environmental Psychology 30, no. 1 (March 2010): pp.1–10, <https://doi.org/10.1016/j.jenvp.2009.09.006>
 25. **Timmerman M. E. and Lorenzo-Seva U.**, “Dimensionality Assessment of Ordered Polytomous Items with Parallel Analysis,” // Psychological Methods 16, no. 2 (June 2011): pp.209–220, <https://doi.org/10.1037/a0023353>
 26. **Tuan Yi-fu**, Space and Place: The Perspective of Experience (Minneapolis: University of Minnesota press, 2001). 235p.
 27. **Twigger-Ross C. L. and Uzzell D. L.**, “Place and Identity Processes,” // Journal of Environmental Psychology 16, no. 3 (September 1996): pp.205–220, <https://doi.org/10.1006/jevvp.1996.0017>
 28. **Ujang N. and Zakariya K.**, “Place Attachment as Indicator for Place Significance and Value,” // Asian Journal of Behavioural Studies 3, no. 10 (March 13, 2018): pp.95-103, <https://doi.org/10.21834/ajbes.v3i10.84>
 29. **ՀՀ Ազգային ժողով**, ՀՀ օրենքը «Տեղական հանրաքվեի մասին» օրենքում լրացումներ ել փոփոխություններ կատարելու մասին. ՀՕ-307-Ն (2020), <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=137889> (Դիտման ամսաթիվը: 21.11.2024)
 30. **Թաթոսյան Ք.**, «Համայնքների Խոշորացման Ազդեցությունը ՏԻՄ Լիազորությունների Արդյունավետ Իրականացման Համատեքստում (Ջերմուկ Խոշորացված Համայնքի Օրինակով)» // ԲԱՆԲԵՐ ՀՊՏՀ 2 (2022): էջ 63–76, https://doi.org/10.52174/1829-0280_2022.2-63

Շտապ/Հանձնվել է՝ 13.01.2025

Рецензирована/Գրախոսվել է՝ 22.01.2025

Принята/Ընդունվել է՝ 29.01.2025